



Թուֆենկյան Հոսպիթալիթի ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

Թուֆենկյան Հոսփիթալիթի ՍՊԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Կազմակերպության գտնվելու վայրը

ՀՀ, Երևան, Հանրապետության-48

Իրավական ձևը՝

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Հյուրանոցային ծառայությունների մատուցում, հյուրանոցների կառուցում

Տեսքեր՝

Հակոբ Հակոբյան



ԶԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. փոստ՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ մասնակիցներին

Վերապահումով Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թուֆենկյան Հոսփիթալիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում ներկայացված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցներում ներառված են մոտ 3 միլիարդ դրամի ընթացիկ արժեքով հողամասեր և շենքեր, որոնք ըստ Ընկերության հաշվապահական քաղաքականության հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են վերոնշյալ հիմնական միջոցների գծով իրական արժեքի փոփոխության հայտանիշներ, սակայն Ընկերությունը չի իրականացրել տվյալ ակտիվների վերագնահատում, որը մեր կարծիքով չի համապատասխանում ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի պահանջներին:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և պահանջել ենք էթիկայի այլ պահանջներ՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության նախորդ՝ 2023թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի է ենթարկել ՊԻ ԿԱ ԷՖ ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊ ընկերությունը և իր 07.08.2024թ-ին թվագրված աուդիտորական եզրակացությամբ արտահայտել է վերապահումով կարծիք

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

ք. Երևան, 16.07.2025թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝



Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝

Արփինե Խաչատրյան

Թուֆենկյան Հոսփիթալիթի ՍՊԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հասույթ	5	1,417,432	1,679,317
Ինքնարժեք	6	(1,773,375)	(1,734,396)
Համախառն շահույթ/(վնաս)		(355,943)	(55,079)
Այլ եկամուտ	9	152,751	5,800
Վարչական ծախսեր	7	(251,164)	(260,330)
Իրացման ծախսեր	8	(45,153)	(36,901)
Այլ ծախսեր	9	(9,098)	(26,900)
Գործառնական շահույթ/(վնաս)		(508,607)	(373,410)
Հիմնական միջոցների օտարումից օգուտ		1,098	291
Ֆինանսական եկամուտ		205	81
Ֆինանսական ծախսեր	10	(146,312)	(268,652)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ (կորուստ)		56,672	(71,856)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		(596,944)	(713,546)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	11	101,579	98,578
Տարվա շահույթ (վնաս)		(495,365)	(614,968)
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(495,365)	(614,968)

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-34) հաստատվել են ղեկավարության կողմից 2025թ. Հուլիսի 16-ին:

Հակոբ Հակոբյան
Գլխավոր տնօրեն



Գեղամ Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

Թուֆենկյան Հոսփիթալիթի ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	811,565	733,337
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	212,448	236,649
Տրված փոխառություններ կապակցված կողմերին		37,358	20,458
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	52,812	164,753
Այլ ընթացիկ ակտիվներ		45,060	-
		1,159,243	1,155,197
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	4,103,619	4,461,180
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	16	1,211,664	1,307,031
Ոչ նյութական ակտիվներ		2,998	3,789
		5,318,281	5,772,000
Ընդամենը ակտիվներ		6,477,524	6,927,197
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	3,277,386	3,008,369
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	1,244,178	1,181,423
Պարտավորություն վարձակալության գծով	16	256,023	255,955
		4,777,587	4,445,747
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	1,005,857	1,259,146
Պարտավորություն վարձակալության գծով	16	1,106,132	1,037,412
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	11,227	112,806
		2,123,216	2,409,364
Ընդամենը պարտավորություններ		6,900,803	6,855,111
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		112,470	112,470
Վերագնահատման պահուստ		1,447,783	1,447,783
Կուտակված վնաս		(1,983,532)	(1,488,167)
Ընդամենը սեփական կապիտալ	19	(423,279)	72,086
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		6,477,524	6,927,197

Հակոբ Հակոբյան
Գլխավոր տնօրեն




Գեղամ Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Գործառնական գործունեություն			
Իրացումից մուտքեր		1,648,064	2,121,080
Այլ մուտքեր		136,444	81
Վճարումներ մատակարարներին		(867,966)	(976,250)
Վճարումներ աշխատակիցներին		(514,534)	(508,721)
Վճարումներ հարկերի գծով		(310,624)	(367,611)
Այլ վճարումներ		(20,799)	(26,475)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		70,585	242,104
Ներդրումային գործունեություն			
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից մուտքեր		-	350
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով վճարումներ		(59,474)	(52,004)
Տրամադրված փոխառությունների մարումից մուտքեր		-	-
Տրամադրված փոխառություններ		(16,900)	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(76,374)	(51,654)
Ֆինանսական գործունեություն			
Վճարված տոկոսներ	18	(102,399)	(112,603)
Վարձակալության գծով կատարված վճարումներ	16	(75,310)	(334,641)
Ստացված վարկերից մուտք/ելք, (զուտ)	18	(210,020)	(167,188)
Ստացված փոխառություններից մուտք/ելք, (զուտ)	18	290,461	405,728
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(97,268)	(208,704)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		(103,057)	(18,254)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(8,884)	7,472
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ		164,753	175,535
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	14	52,812	164,753

Թուֆենկյան Հոսփիրալիթի ՍՊԸ
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ	Վերագնա- հատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
01.01.2023թ. դրությամբ	112,470	1,447,783	(873,199)	687,054
Տարվա շահույթ (վնաս)	-	-	(614,968)	(614,968)
31.12.2023թ. դրությամբ	112,470	1,447,783	(1,488,167)	72,086
01.01.2024թ. դրությամբ	112,470	1,447,783	(1,488,167)	72,086
Տարվա շահույթ (վնաս)	-	-	(495,365)	(495,365)
31.12.2024թ. դրությամբ	112,470	1,447,783	(1,983,532)	(423,279)

Հակոբ Հակոբյան
Գլխավոր տնօրեն



Գեղամ Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

Բովանդակություն

1. Ընկերության մասին.....	11
2. Պատրաստման հիմքերը.....	12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ	12
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում	14
5. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	18
6. Ինքնարժեք	19
7. Վարչական ծախսեր.....	20
8. Իրացման ծախսեր.....	20
9. Այլ եկամուտ և այլ ծախսեր.....	20
10. Ֆինանսական ծախսեր	20
11. Շահութահարկ	20
12. Պաշարներ.....	21
13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	22
14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	22
15. Հիմնական միջոցներ.....	23
16. Վարձակալություն	24
17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.....	25
18. Վարկեր և փոխառություններ.....	26
19. Սեփական կապիտալ.....	27
20. Կապակցված կողմեր	27
21. Պայմանական պարտավորություններ	28
22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր.....	29
23. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	29
Հավելված 1 Իրական արժեքի չափման բացահայտումներ	34

1. Ընկերության մասին

Ընկերությունը և նրա հիմնական գործունեությունը

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև Ընկերություն) հիմնադրվել է 2001թ. ապրիլի 9-ին ՀՀ օրենսդրությանը համապատասխան Ամերիկայի Միացյալ Նահանգներում գրանցված «Թուֆենկյան Հոլդինգս» ՍՊԸ կողմից:

Ընկերության հիմնական գործունեությունը հյուրանոցային ծառայությունն է: Ընկերությունը ներգրավված է նաև հյուրանոցների կառուցապատման գործունեությունում:

Մինչև 2016 թվականն Ընկերությունը շահագործում էր հետևյալ չորս հյուրանոցները.

- Թուֆենկյան ավանդական Երևան հյուրանոց (Երևան քաղաք),
- Ավան Մարագ Ծափաթաղ հյուրանոց (Գեղարքունիքի մարզ),
- Ավան Զորագետ հյուրանոց (Լոռու մարզ),
- Հին Դիլիջան համալիր (Տավուշի մարզ):

2016 թվականին Ընկերության վերակազմակերպման (առանձնացման) արդյունքում Թուֆենկյան ավանդական Երևան հյուրանոցը և Հին Դիլիջան համալիրն անցան նոր ստեղծված ընկերություններին:

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության-48:

Բաժնետերերը

Ընկերության 93.575% բաժնեմասերի սեփականատերն է Ամերիկայի Միացյալ Նահանգներում գրանցված «Թուֆենկյան Հոլդինգս» ՍՊԸ, իսկ մնացած բաժնեմասերը պատկանում են ՀՀ քաղաքացիներ Հակոբ Հակոբյանին (4.925 %) և Հովհաննես Պողոսյանին (1.500 %):

Կապակցված կողմերի հետ գործարքները մանրամասնված են Ծանոթագրություն 20-ում:

Ընկերության աշխատողների միջին թվաքանակը 2024թ. ընթացքում կազմել է 155 (2023թ.՝ 172):

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Կորոնավիրուսի նոր տեսակի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումն էական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Համավարակի ազդեցությունը դեռևս շարունակվում է, ինչպես նաև խնդրի լուծման համար ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը դեռևս մնում է անորոշ:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը նույնպես շարունակում է մնալ անկայուն՝ հաշվի առնելով 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքները և ընթացիկ տարածայնությունները տարածքների սահմանազատման մասով: Վերոհիշյալ քաղաքական և տնտեսական գործոնների ազդեցությունը հանգեցրին ներդրողների ընդհանուր տրամադրությունների նվազմանը և ֆինանսական շուկաներում անորոշության և խոցելիության աճին:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ իր գործունեության կայունությունն ապահովելու

նպատակով, այդուհանդերձ ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

2. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (<<ՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որոշեցրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայաստանի Հանրապետության դրամական միավորով (<< դրամ), որը նաև Ընկերության գործառնական արժույթն է:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

2.1. Զափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք չափվել են իրական (վերագնահատված) արժեքով (Ծնթ. 15-ը):

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Առկա չեն 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք նշանակալի ազդեցություն կունենան Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն հրապարակված, սակայն դեռ ուժի մեջ չմտած, նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Կազմակերպության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Անընդհատության սկզբունք

Ընկերությունը վերջին տարիներին կրել է ֆինանսական վնասներ, մասնավորապես՝ 31.12.2024թ. դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 1,984 միլիոն դրամ (31.12.2023թ. դրությամբ՝ 1,488 միլիոն դրամ):

Ընկերության հյուրանոցային գործունեության վրա նշանակալի բացասական ազդեցություն է թողել 2020թ. գարնանից սկսված COVID-19 համավարակը, ինչպես նաև 2020թ. աշնանը սանձազերծված պատերազմը: Նշված

հանգամանքները և նրանց հետևանքները առավել մանրամասն ներկայացված են Ծնթ. 1-ում՝ «Գործարար միջավայր» բաժնում:

2021-2022թթ. ընթացքում Ընկերությունը կարողացել է վերականգնվել և ապահովել հասույթի մեծ աճ, սկսել մատուցել նոր ծառայություններ, սակայն 2023-2024թթ. ընթացքում հասույթը կրկին նվազել է:

Ընկերության ղեկավարությունը ֆինանսական վնասների արդյունքում առաջացող դրամական միջոցների պակասորդը լրացնում է Ընկերության մասնակցից ստացվող անտոկոս փոխառություններով (Ծնթ. 18): Նշված փոխառությունների մնացորդը 31.12.2024թ. դրությամբ կազմել է 3,041 միլիոն դրամ (31.12.2023թ.՝ 2,786 միլիոն դրամ):

Ընկերության ղեկավարությունը միջոցներ է ձեռնարկել Ընկերության ֆինանսական վիճակի բարելավման նպատակով, մասնավորապես գործունեություն է ծավալել նոր որոշումներում (հյուրանոցների շինարարություն, գինու արտադրություն և արևային էներգիայի միջոցով հոսանքի արտադրություն և վաճառք):

Ընկերությունը նաև իրականացնում է իրացվելիության մշտական վերահսկողություն և կառավարում:

Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքն իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

Անտոկոս փոխառությունների չափում (Ծնթ. 18)

Ընկերությունը ստացել է անտոկոս փոխառություններ Ընկերության նկատմամբ վերահսկողություն ունեցող անձանցից՝ մասնակիցներից, ինչպես նաև ընդհանուր կառավարման տակ գտնվող կազմակերպություններից, որպես դրամական հոսքերի կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս: Ընկերությունը չի վերահսկում փոխառությունների տրամադրման կամ մարման ժամկետները, ինչը ենթադրում է, որ նշված փոխառություններն ըստ էության ցպահանջ են և զեղչվում են 0 տոկոս դրույքով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տես Ծնթ. 23-ը): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Վարձակալության ժամկետի որոշումը որոշ վարձակալությունների դեպքում, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ, ներկայացված է Ծնթ. 16-ում:

Վարձակալության գծով պարտավորության զեղչման տոկոսադրույքի որոշումը ներկայացված է Ծնթ. 16-ում:

Իրական արժեքի չափում

Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ներառված մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտումով:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2: Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր

- Մակարդակ 3: Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)

Իրական արժեքների աստիճանականացում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

4. Ֆինանսական գործիքներ - ոիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ոիսկերին՝

- Պարտքային ոիսկ
- Արտարժույթային ոիսկ
- Իրացվելիության ոիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ոիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ոիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ոիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ոիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ոիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ոիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,
- Ստացված վարկեր և փոխառություններ,
- Վարձակալության գծով պարտավորություններ,
- Տրամադրված փոխառություններ կապակցված կողմերին:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ դասերի

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

Տրամադրված փոխառություններ
Առևտրային դեբիտորական պարտքեր
Դրամական միջոցներ
Ընդամենը ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով
չափվող

2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
37,358	20,458
57,476	52,806
52,812	164,753
147,646	238,017

Ֆինանսական պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ
Առևտրային կրեդիտորական պարտքեր
Պարտավորություն վարձակալության գծով
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ

Ամորտիզացված արժեքով
չափվող

2024թ.	2023թ.
հազ. դրամ	հազ. դրամ
4,283,243	4,267,515
164,509	114,501
1,362,155	1,293,367
5,809,907	5,675,383

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները, ինչպես նաև փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի, վարձակալության գծով պարտավորությունների, փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտարկում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Հավելված 1-ում ներկայացվում է տեղեկատվություն՝ իրական արժեքի աստիճանակարգի, գնահատման մեթոդների և՝ իրական արժեքի աստիճանակարգի մակարդակ 3-ում դասակարգված ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման հետ կապված այլ նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալների մասին:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է Պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապառիկ վաճառքից: Ընկերությունը որդեգրել է նախքան հաճախորդի հետ պայմանագիր կնքելը վարկային ռիսկը գնահատելու քաղաքականություն, որը իրականացվում է տեղական մակարդակով: Վարկային նման վարկանիշները հաշվի են առնվում տեղական բիզնես գործունեության ոլորտում:

Նախքան նոր հաճախորդին պայմաններ առաջարկելը, ստուգվում է վերջինիս վարկունակությունը: Ընկերության ստուգումները ներառում են առկա արտաքին վարկանիշների և որոշ դեպքերում բանկային տեղեկանքների ստուգումները: Յուրաքանչյուր հաճախորդի համար սահմանվում են ձեռքբերման գծով սահմանափակումներ, որոնք ներառում են տարածամեծ վճարմամբ վաճառքի թույլատրելի առավելագույն գումարը:

Տնօրենը որոշում է վարկային ռիսկի կենտրոնացումը՝ եռամսյակային կտրվածքով ստուգելով ընթացիկ հաճախորդների վարկունակության վարկանիշը, ինչպես նաև ամսական կտրվածքով անցկացնելով առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծություն: Հաճախորդի պարտքային ռիսկերը ստուգելիս հաճախորդները դասակարգվում են ըստ վարկային բնութագրերի: Կազմվում է «բարձր ռիսկային» հաճախորդների ցուցակ, որում ընդգրկված հաճախորդներին ապառիկ վաճառքն իրականացվում է միայն Ընկերության սեփականատիրոջ հաստատմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցների և դրանց համարժեքների և բանկերում տեղաբաշխված ավանդների գծով: Ընկերության համար ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող տեղական բանկերը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերաբերյալ բացահայտումները, որոնք ո՛չ ժամկետանց են, ո՛չ էլ արժեզրկված, ներկայացված են Ծնթ. 12-ում:

Դրամական միջոցներ բանկերում

Ձգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում՝

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Բանկ 1	33,447	136,958
Բանկ 2	431	499
Բանկ 3	16,341	11,638
Բանկ 4	625	699
Բանկ 5	211	1,416
Ընդամենը	51,055	151,210

Վերը նշված ֆինանսական հաստատությունները վարկանշվել են միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից: Ղեկավարությունը իր միջոցների տեղաբաշխման համար գործընկերների ընտրության գործում հիմնվում է նաև տեղական շուկայում գործող ֆինանսական հաստատությունների իր կողմից կատարված վերլուծությունների վրա: Ղեկավարությունը կանոնավոր կերպով ստուգում է գործընկերների վարկանիշները: Հաշվետու ամսաթվի դրությամբ գործընկերների պարտականությունների չկատարման հետևանքով առաջացող վնասներ չեն ակնկալվում:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված չեն վերջիններիս գործառնական արժույթով: Ընկերության քաղաքականության համաձայն՝ թույլատրվում է Ընկերության գործառնական արժույթով պարտավորությունները հնարավորության դեպքում գործընկերներին մարել տվյալ արժույթով արտահայտված գործարքներից ստացված դրամական միջոցներով:

Սույն քաղաքականության շարունակական արդյունավետությունը վերահսկելու համար ղեկավարությունը ստանում է մարման ենթակա պարտավորությունների և ապագա դրամական միջոցների պահուստի գծով ամսական կանխատեսում՝ ըստ Ընկերության հիմնական արժույթների:

Ընկերության արտարժույթային ռիսկը հիմնականում առաջանում է մատակարարների կողմից կատարված ձեռքբերումներից կամ մատուցած ծառայություններից:

Դրամական միջոցների հոսքերից բացի, Ընկերությունը պլանավորում է նաև ֆինանսավորել համապատասխան արժույթով արտահայտված ծախսերը և արտարժույթային ռիսկի տեղական մակարդակով կառավարել ներդրումները՝ համապատասխանեցնելով արժույթը, որով արտահայտված են հասույթը և ծախսերը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթակայությունը արտարժույթային ռիսկերին ներկայացված է ստորև՝

	31.12.2024 հազ. դրամ		31.12.2023 հազ. դրամ	
	ԱՄՆ դոլար	Եվրո	ԱՄՆ դոլար	Եվրո
Մնացորդներ բանկերում	13,776	527	141,826	525
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(18,054)	(7,061)	(16,573)	(1,721)
Ֆինանսական վարձակալության գծով	(263,828)	-	(341,688)	-
Վարկեր և փոխառություններ	(2,673,790)	(9,617)	(2,452,241)	(10,407)
Զուտ դիրք	(2,941,896)	(16,151)	(2,668,676)	(11,603)

Արտարժույթային ֆինանսական գործիքները ՀՀ դրամով չափելու նպատակով Ընկերությունն օգտագործել է հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ՀՀ կենտրոնական բանկի հետևյալ փոխարժեքները՝ 413.89 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց (2023թ.՝ 447.90 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց) և 396.56 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2023թ.՝ 404.79 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց):

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 5% արժեզրկման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնեք տարվա շահույթի (հարկումից առաջ) և զուտ ակտիվների 147,095 հազ. դրամով (2023թ.՝ 133,434 հազ. դրամ) աճի, իսկ 5% արժևորման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից առաջ) և զուտ ակտիվների նվազման նույն չափով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի 5% արժեզրկման ազդեցությունը եվրոյով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնեք տարվա շահույթի (հարկումից առաջ) և զուտ ակտիվների 808 հազ. դրամով (2023թ.՝ 580 հազ. դրամ) աճի, իսկ 5% արժևորման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից առաջ) և զուտ ակտիվների նվազման նույն չափով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական վճարներից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ռիսկերի հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ղեկավարությունը ստանում է 12 ամսվա դրամական միջոցների հոսքերի գծով ամսական կանխատեսումներ, ինչպես նաև մանրամասներ դրամական միջոցների մնացորդների մասին: Համաձայն հաշվետու տարեվերջի դրությամբ կատարված վերոնշյալ կանխատեսումների՝ ֆինանսական տարվա ընթացքում Ընկերությունը կունենա բավարար միջոցներ՝ ակնկալվող ողջամիտ ժամկետներում պարտավորությունները մարելու համար:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տա րուց ավելի
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	266,511	-	-	-	-
Պարտավորություն վարձակալության գծով	67,500	67,500	135,000	1,350,000	-
Վարկեր և փոխառություններ	80,112	80,131	2,836,714	1,110,372	645,250
	414,123	147,631	2,971,714	2,460,372	645,250
	Մինչև 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տա րուց ավելի
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	164,005	-	-	-	-
Պարտավորություն վարձակալության գծով	67,500	67,500	135,000	1,350,000	270,000
Վարկեր և փոխառություններ	80,513	80,529	161,134	3,647,800	652,822
	312,018	148,029	296,134	4,997,800	922,822

Կապիտալի վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով:

Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը (այն է՝ կանոնադրական կապիտալ, էմիսիոն եկամուտ, չվերահսկող բաժնեմաս, չբաշխված եկամուտ և վերագնահատման պահուստ), բացի դրամական միջոցների հոսքերի հեջավորման գծով պահուստի գումարներից:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ

- կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով եկամուտներ և հատուցումներ,
- կարողանա բաժնետերերի համար ապահովել պատշաճ եկամուտ՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով դիսկի մակարդակին համապատասխան:

Ընկերությունը սահմանում է անհրաժեշտ կապիտալի չափը գնահատված ռիսկերին համապատասխան: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին և ակտիվների ռիսկերի բնույթին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ պարտքը նվազեցնելու նպատակով վաճառել ակտիվները:

Ընկերությունն իրականացնում է կապիտալի նկատմամբ հսկողություն՝ պարտքի և ճշգրտված կապիտալի հարաբերակցության սկզբունքով: Սույն հարաբերակցությունը հաշվարկվում է որպես զուտ պարտքը՝ բերած ճշգրտված կապիտալին: Զուտ պարտքը իրենից ներկայացնում է ընդհանուր պարտքը՝ հանած դրամական միջոցների մնացորդը:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Վարկեր, փոխառություններ և վարձակալական վճարներ	5,645,398	5,560,882
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(52,812)	(164,753)
Զուտ պարտք	<u>5,592,586</u>	<u>5,396,129</u>
Ընդհանուր սեփական կապիտալ	<u>(423,279)</u>	<u>72,086</u>
Պարտքի և ճշգրտված կապիտալի հարաբերակցություն	<u>-</u>	<u>74.86</u>

5. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունն իր հասույթը տարանջատել է ըստ հետևյալ խմբերի.

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Շինարարական աշխատանքներ (ա)	31,669	111,875
Հյուրանոցային ծառայություններ	1,140,625	1,320,398
Էլեկտրաէներգիայի վաճառք (բ)	231,189	235,118
Գինու վաճառք	12,070	9,773
Ապրանքների վաճառք	1,879	2,153
	<u>1,417,432</u>	<u>1,679,317</u>

(ա) Ընկերությունը կապակցված կողմի պատվերով իրականացնում է վերջինիս պատկանող հյուրանոցի շինարարություն: Շինարարությունից հասույթը ճանաչվում է ավարտվածության աստիճանով: Շինարարական աշխատանքներում ներգրավված են նաև ենթակապալառու կազմակերպություններ:

(բ) Ընկերությունը վաճառում է արևային պանելների միջոցով արտադրված էլեկտրաէներգիան:

Ստորև բերվող աղյուսակում պատվիրատուների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հայաստանի Հանրապետություն	1,417,432	1,679,317
Ընդամենը հասույթ	1,417,432	1,679,317

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ակտիվի գնորդին փոխանցման պահը	288,562	295,008
Ժամանակի որևէ պահին	1,128,870	1,384,309
Ժամանակի ընթացքում	1,417,432	1,679,317

6. Ինքնարժեք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մատուցված հյուրանոցային ծառայությունների ինքնարժեք (ա)	1,342,101	1,217,818
Կատարված շինարարական աշխատանքների ինքնարժեք (բ)	12,287	94,807
Էլեկտրաէներգիայի արտադրություն (գ)	405,739	410,851
Գինու արտադրություն (դ)	11,798	9,494
Այլ	1,450	1,426
	1,773,375	1,734,396

ա) Մատուցված հյուրանոցային ծառայությունների ինքնարժեք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Անձնակազմի վարձատրություն	476,053	398,567
Պաշարների գծով ծախսեր	40,418	60,570
Մաշվածություն և ամորտիզացիա	111,849	100,953
Ստացված ծառայություններ	511,006	470,245
Ակտիվների օգտագործման իրավունքի ամորտիզացիա	201,944	186,719
Այլ ծախսեր	831	764
	1,342,101	1,217,818

բ) Կատարված շինարարական աշխատանքների ինքնարժեք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ենթակապալառուներից ստացված շին. աշխատանքներ և այլ ծառայություններ	1,076	68,473
Նյութածախս	159	9,936
Անձնակազմի վարձատրություն	9,573	14,216
Այլ ծախսեր	1,479	2,182
	12,287	94,807

գ) Էլեկտրաէներգիայի արտադրության ինքնարժեք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա (էլեկտրաէներգիա)	368,565	368,067
Ստացված ծառայություններ էլեկտրաէներգիայի գծով	37,174	42,627
Անձնակազմի վարձատրություն	-	55
Այլ ծախսեր	-	102
	405,739	410,851

դ) Գինու արտադրության ինքնարժեք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա (գինի)	204	1,006
Ստացված ծառայություններ գինու գծով	1,769	956
Անձնակազմի վարձատրություն	6,259	4,383
Նյութածախս	3,566	3,149
	11,798	9,494

7. Վարչական ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Անձնակազմի վարձատրություն	202,288	208,746
Բանկային և ապահովագրական ծախսեր	26,182	24,710
Աուդիտի և խորհրդատվության գծով ծախսեր	3,441	3,404
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	7,557	6,433
Մաշվածություն և ամորտիզացիա	2,272	2,581
Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր	1,890	1,116
Այլ	7,534	13,340
	<u>251,164</u>	<u>260,330</u>

8. Իրացման ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Կոմիսիոն ծախսեր	34,244	21,761
Մարկետինգ և գովազդ	10,909	15,140
	<u>45,153</u>	<u>36,901</u>

9. Այլ եկամուտ և այլ ծախսեր

Այլ եկամուտ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Նյութական վնասի հատուցումից եկամուտ	136,238	-
Սուբսիդավորման գծով եկամուտ	14,636	5,374
Այլ եկամուտ	1,877	426
	<u>152,751</u>	<u>5,800</u>

Այլ ծախսեր	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Դեբիտորական պարտքերի պահուստի գծով ծախսեր	824	1,361
Պաշարների արժեզրկման գծով կորուստներ	8,244	23,573
Տուգանքների և տույժերի գծով ծախսեր	30	-
Այլ ծախսեր	-	1,966
	<u>9,098</u>	<u>26,900</u>

10. Ֆինանսական ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տոկոսային ծախսեր վարկերի և փոխառությունների գծով	108,792	120,545
Տոկոսային ծախսեր վարձակալական պարտավորությունների գծով	37,520	148,107
	<u>146,312</u>	<u>268,652</u>

11. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախս / (փոխհատուցում)

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ շահութահարկ		
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	-
Հետաձգված շահութահարկ		
Ժամանակավոր տարբերությունների ծագում և հակադարձում	(2,116)	(57,052)
Հարկային վնասներ	(99,463)	(41,526)
	<u>(101,579)</u>	<u>(98,578)</u>

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2023թ.՝ 18%):
Ընթացիկ տարվա շահութահարկը և հետաձգված հարկը հաշվարկվել է 18% տոկոսադրույքով:

Հարկային դրույքի համադրում

	2024թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ		2023թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ (վնաս) հարկումից առաջ	(596,944)		(713,546)	
Շահութահարկ	(107,450)	18%	(128,438)	18%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ զուտ	5,871	-1%	29,860	-4%
Ընդամենը հարկային ծախս (փոխհատուցում)	(101,579)	17%	(98,578)	14%

Հայաստանի Հանրապետությունում ՖՀՄՍ-ի և հարկային օրենսդրության միջև տարբերությունները հանգեցնում են ֆինանսական հաշվետվության նպատակներով ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերությունների:

Հետաձգված հարկային ակտիվների/(պարտավորությունների) և շահույթում կամ վնասում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		Շահույթի կամ վնասի հաշվետվություն	
	2024 հազ. դրամ	2023 հազ. դրամ	2024 հազ. դրամ	2023 հազ. դրամ
Դեբիտորական պարտքերի պահուստավորում	1,826	1,678	148	244
Արձակուրդների պահուստավորում	6,993	6,918	75	1,295
Հիմնական միջոցների վերազնահատումներ	(273,154)	(279,059)	5,905	5,905
Պաշարների արժեզրկում	23,817	22,333	1,484	4,243
Այլ ժամանակավոր տարբերություններ	50,390	55,886	(5,496)	45,365
Առկա վնասներ	178,901	79,438	99,463	41,526
	(11,227)	(112,806)	101,579	98,578

ՀՀ հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն հաշվետու և նախորդ տարիներին առաջացած հարկային վնասները տեղափոխվում են վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

Ստորև ներկայացվում է Ընկերության հարկային վնասն ըստ առաջացման տարիների և գործողության ժամկետների.

հազ. դրամ	Գումար	Գործողության ժամկետ	Հարկային վնասի 18% (հետաձգված հարկային ակտիվ)
2018թ. առաջացած հարկային վնաս	70,414	31-12-2023	12,675
2019թ. առաջացած հարկային վնաս (շահույթ)	(148,556)	31-12-2024	(26,740)
2020թ. առաջացած հարկային վնաս (շահույթ)	253,196	31-12-2025	45,575
2021թ. առաջացած հարկային վնաս (շահույթ)	(8,942)	31-12-2026	(1,610)
2022թ. առաջացած հարկային վնաս (շահույթ)	(27,232)	31-12-2027	(4,902)
2023թ. առաջացած հարկային վնաս	302,444	31-12-2028	54,440
2024թ. առաջացած հարկային վնաս	682,013	31-12-2029	122,762
Հարկային վնասի նվազեցում	(129,439)		(23,299)
Ընդամենը	993,898		178,901

12. Պաշարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Շինանյութ	300,631	323,759
Ապրանքներ	244,319	215,649
Նյութեր	8,309	6,631
Վառելիք	773	1,170
Պահեստամասեր	4,325	5,443
Այլ պաշարներ	253,208	180,685
	811,565	733,337

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պաշարների արժեզրկման պահուստը կազմել է 132,317 հազ. դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 124,047 հազ. դրամ):

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	66,287	61,620
Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը	(10,143)	(9,319)
Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	56,144	52,301
Դեբիտորական պարտքեր կապակցված կողմերի գծով	1,332	505
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ	57,476	52,806
Տրված կանխավճարներ (ա)	147,002	172,723
Այլ դեբիտորական պարտքեր	7,970	11,120
	212,448	236,649

(ա) Տրված կանխավճարներն իրենցից ներկայացնում են կապակցված կողմի պատվերով իրականացվող շինարարական աշխատանքներում ներգրավված ենթակապալառու կազմակերպություններին, ինչպես նաև այլ մատակարարներն տրված կանխավճարները: Կանխավճարները մարվել են հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում ենթակապալառու կազմակերպությունների կատարված աշխատանքներին համամասնորեն, ձեռքբերված պաշարների և ծառայությունների չափով:

Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստն իրենցից ներկայացնում է ընդհանուր պարտքերի գծով 15 % արժեզրկման ճանաչումը:

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ բանկերում (արտարժույթ)	15,777	142,351
Ընթացիկ հաշիվներ բանկերում (<< դրամ)	35,279	8,859
Դրամական միջոցներ դրամարկղներում	1,756	13,543
Ընդամենը դրամական միջոցներ	52,812	164,753

Թուֆենկյան Հոսիթալիթի ՄԴԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, հազար դրամով (շարունակություն)

15. Հիմնական միջոցներ

	Շենքեր և կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորում	Տրանսպորտային միջոցներ	Սարքեր և հարմարանքներ	Հողամասեր	Այլ	Ընդամենը
Ավերական կամ վերազնահատված արժեք							
Մնացորդն առ 01.01.2023թ.	3,179,346	2,037,267	21,513	367,003	414,363	239,252	6,258,744
Ավելացումներ	49,223	109,683	2,777	66,084	-	81,050	308,817
Օտարումներ	-	(4,327)	(6,050)	-	-	-	(10,377)
Մնացորդն առ 31.12.2023թ.	3,228,569	2,142,623	18,240	433,087	414,363	320,302	6,557,184
Մնացորդի ճշգրտում	-	-	-	-	-	357	357
Ավելացումներ	11,373	25,286	4,389	46,513	-	74,922	162,483
Օտարումներ	-	-	(3,120)	(169)	-	(263)	(3,552)
Մնացորդն առ 31.12.2024թ.	3,239,942	2,167,909	19,509	479,431	414,363	395,318	6,716,472
Կուտակված մաշվածություն							
Մնացորդն առ 01.01.2023թ.	480,620	757,680	21,192	284,528	-	61,768	1,605,788
Տարվա ծախս	86,712	382,540	419	26,049	-	903	496,623
Օտարումներ	-	-	(6,049)	-	-	(358)	(6,407)
Մնացորդն առ 31.12.2023թ.	567,332	1,140,220	15,562	310,577	-	62,313	2,096,004
Մնացորդի ճշգրտում	-	-	-	-	-	357	357
Տարվա ծախս	88,912	392,713	1,010	36,309	-	956	519,900
Օտարումներ	-	-	(3,120)	(25)	-	(263)	(3,408)
Մնացորդն առ 31.12.2024թ.	656,244	1,532,933	13,452	346,861	-	63,363	2,612,853
Զուտ հաշվեկշռային արժեք							
Մնացորդն առ 01.01.2023թ.	2,698,726	1,279,587	321	82,475	414,363	177,484	4,652,956
Մնացորդն առ 31.12.2023թ.	2,661,237	1,002,403	2,678	122,510	414,363	257,989	4,461,180
Մնացորդն առ 31.12.2024թ.	2,583,698	634,976	6,057	132,570	414,363	331,955	4,103,619

Թուֆենկյան Հոսփիթալիթի ՄՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, հազար դրամով (շարունակություն)

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 626,935 հազ. դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 521,807 հազ. դրամ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հիմնական միջոցները գրավադրված են 642,187 հազ. դրամի չափով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 642,187 հազ. դրամի չափով):

Մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Իրացման ինքնարժեք	481,316	494,050
Կապիտալ ծախսումներ	36,342	-
Վարչական ծախսեր	2,242	2,573
	<u>519,900</u>	<u>496,623</u>

Վերագնահատված արժեքով չափվող հողամասի և շենքերի արժեքներն առանց վերագնահատումների կլինենին հետևյալ կերպ.

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հողամաս		
Սկզբնական արժեք	172,844	172,844
Կուտակված մաշվածություն	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	<u>172,844</u>	<u>172,844</u>
Շենքեր		
Սկզբնական արժեք	908,364	908,364
Կուտակված մաշվածություն	(279,746)	(245,312)
Զուտ հաշվեկշռային արժեք	<u>628,618</u>	<u>663,052</u>

Իրական արժեքի չափում (վերագնահատված գույք)

Որպես հիմնական միջոցներ դասակարգված հողամասերը և շենքերը գնահատվել են 2016թ. մարտի 31-ին արտաքին անկախ գնահատողի կողմից: Հողամասերի գնահատման համար կիրառվել է համեմատական մեթոդը, իսկ շենքերի գնահատման համար՝ ծախսային մեթոդը: Այդ գնահատումից հետո այլ գնահատումներ չեն կատարվել, սակայն այդ ընթացքում այդ հիմնական միջոցների իրական արժեքները ենթարկվել են էական փոփոխությունների:

Հողամասերի և շենքերի իրական արժեքը դասակարգվել է իրական արժեքի կրկնվող չափումների 3-րդ մակարդակում: Գնահատման մեթոդները ժամանակաշրջանի ընթացքում փոփոխության չեն ենթարկվել:

16. Վարձակալություն

Ընկերությունը վարձակալում է հյուրանոցային և ռեստորանային տարածք: Վարձակալությունը մեկնարկել է 2017թ. դեկտեմբերի 1-ին և ավարտվում է 2030թ. դեկտեմբերի 30-ին:

Պայմանագրի էական պայմանների փոփոխության արդյունքում Ընկերությունը 01.01.2023թ. ապաճանաչել է նախորդ վարձակալական պայմանագրի գծով պարտավորությունը և ճանաչել է նոր պայմաններով վարձակալական պարտավորություն և օգտագործման իրավունքի ձևով ակտիվ: Բացի այդ, էական փոփոխության է ենթարկվել նաև վարձակալության գծով տրված կանխավճարը, որի արդյունքում 2024թ. կատարվել է վարձակալական պարտավորության և օգտագործման իրավունքի ձևով ակտիվի վերահաշվարկ:

16.1. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

Հյուրանոցային շենք և գույք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Առ 1 հունվարի	1,307,031	500,537
Ավելացում	-	-
Վարձակալության պայմանագրի փոփոխության ազդեցություն	-	993,213
Տրված կանխավճարի փոփոխության ազդեցություն	106,577	-
Ամորտիզացիա	(201,944)	(186,719)
Առ 31 դեկտեմբերի	1,211,664	1,307,031

16.2. Պարտավորություն վարձակալության գծով

Հյուրանոցային շենք և գույք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Առ 1 հունվարի	1,293,367	486,688
Ավելացում	-	-
Տոկոսային ծախս	37,521	148,107
Վարձակալության պայմանագրի փոփոխության ազդեցություն	-	993,213
Տրված կանխավճարի փոփոխության ազդեցություն	106,577	-
Վճարում	(75,310)	(334,641)
Առ 31 դեկտեմբերի	1,362,155	1,293,367
Ընթացիկ	256,023	255,955
Ոչ ընթացիկ	1,106,132	1,037,412

17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	153,239	102,997
Կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերին	11,270	11,504
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների	164,509	114,501
Ստացված կանխավճարներ (ա)	975,747	1,015,498
Աշխատավարձ և արձակուրդային վճարումների գծով պահուստ	86,702	38,578
Վճարվելիք հարկեր և այլ պարտավորություններ	15,300	10,926
Այլ կրեդիտորական պարտքեր	1,920	1,920
	1,244,178	1,181,423

(ա) Ստացված կանխավճարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Կապակցված կողմ հանդիսացող պատվիրատուից շինարարական աշխատանքների կատարման համար ստացված կանխավճար	942,294	980,296
Հյուրանոցային ծառայության դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված կանխավճար	33,453	35,202
	975,747	1,015,498

Ստացված կանխավճարները մարվել են ընթացիկ տարում կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալներին համապատասխան:

18. Վարկեր և փոխառություններ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ	3,277,386	3,008,370
Ոչ ընթացիկ	1,005,857	1,259,145
	4,283,243	4,267,515

	Արժույթ	Դրույք	Մարման ժամկետ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	8-9 %	2029-2030	860,351	1,003,111
Ապահովված բանկային վարկ	ՀՀ դրամ	14%	2028	58,000	58,000
Ֆինանսական վարձակալություն	ԱՄՆ դոլար		2026-2028	263,828	341,688
Ֆինանսական վարձակալություն	ՀՀ դրամ		2027-2028	53,632	72,455
Չապահովված փոխառություն կապակցված կողմից	ՀՀ դրամ	0%	ցպահանջ	1,222,388	1,330,698
Չապահովված փոխառություն կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	0%	ցպահանջ	1,809,186	1,444,397
Չապահովված փոխառություն կապակցված կողմից	Եվրո	0%	ցպահանջ	9,617	10,407
Բանկային վարկի տոկոսներ				4,453	4,978
Ֆինանսական վարձակալության տոկոսներ				1,788	1,781
				4,283,243	4,267,515

Հետևյալ աղյուսակում ներկայացվում են վարկերի ու փոխառությունների գծով դրամական և ոչ դրամական շարժերը:

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	4,267,515	3,890,023
Դրամական հոսքեր		
Հոսքեր ստացված բանկային վարկերից և փոխառություններից	456,271	412,728
Վարկերի և փոխառությունների մարումներ	(375,830)	(174,188)
Վարկերի և փոխառությունների տոկոսագումարների մարումներ	(102,399)	(112,603)
	(21,958)	125,937
Ոչ դրամական շարժեր		
Տոկոսագումարների հաշվեգրում	108,792	120,545
Կապիտալացված տոկոսներ	-	-
Ավելացում (նվազեցում) վերադասակարգումից	(5,583)	52,079
Արտարժույթի վերագնահատման ազդեցություն	(65,523)	78,931
	37,686	251,555
Վերջնական մնացորդ	4,283,243	4,267,515

19. Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող կապիտալը կազմում է 112,470 հազ. դրամ և բաժանված է 3 մասնակիցների միջև (Ծնթ. 1):

Սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության ժողովներում: Ընկերությունը վերագնահատման պահուստը ձևավորել է 2016թ. սեփականության իրավունքով պատկանող հողամասերի և շենքերի վերագնահատման արդյունքում:

Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են ՖՀՄՄ-ների համաձայն Ընկերության պատրաստած ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահաբաժիններ չեն հայտարարվել (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահաբաժիններ չէին հայտարարվել):

20. Կապակցված կողմեր

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը իրականացրել է հետևյալ գործարքները կապակցված կողմերի հետ.

	2024	2023
	հազ. դրամ	հազ. դրամ
ա) Գործարքներ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունների հետ		
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիա	201,944	186,719
Տոկոսային ծախս վարձակալության գծով	37,520	148,107
Ապրանքների ձեռքբերում	439	1,938
Հյուրանոցային (ռեստորանային) ծառայություն	4,172	743
Շինարարական աշխատանքներ	31,669	111,875
Ապրանքների վաճառք	188	-
բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ		
Վարձակալություն	-	3,763
գ) Մնացորդներ առևտրային գործարքներից մասնակիցների հետ		
Կրեդիտորական պարտքեր	8,048	8,215
դ) Մնացորդներ առևտրային գործարքներից ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունների հետ		
Կանխավճար վարձակալության գծով*	127,531	322,221
Ստացված կանխավճարներ	942,294	980,296
Կրեդիտորական պարտքեր	3,223	3,289
Դեբիտորական պարտքեր	1,332	505
Տրված կանխավճարներ	271	271

* Վարձակալության գործարքների մանրամասները ներկայացված են Ծնթ. 16-ում:

ե) Փոխառություններ կապակցված կողմերին կամ կապակցված կողմերից

Փոխառություններ մասնակիցներից	599,427	731,237
Փոխառություններ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններից	987,797	971,868
Փոխառություններ այլ կապակցված կողմից	1,453,967	1,082,397

զ Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը հաշվետու ժամանակաշրջանում ստացել է վարձատրություն միայն աշխատավարձ և դրան հավասարեցված վճարների տեսքով, ընդհանուր 45,207 հազ. դրամ (2023թ.՝ 35,528 հազ. դրամ):

21. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական երաշխիքներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերության գոյքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գոյքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիների համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը հարկային տարում գերազանցում է 200 միլիոն դրամը.

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,

- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ռազմական գործողություններ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ: Ռուսաստանին դիմագրավելու նպատակով ԵՄ-ն, ԱՄՆ-ը և աշխարհի շատ երկրներ տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են հայտարարել և կիրառում, որի արդյունքում Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս պատերազմի ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի են:

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության և ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն, որ Հայաստանը ԵԱՏՄ կառույցի անդամ է, ստեղծված իրավիճակն անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Մինչև այժմ շարունակվող գործողությունները հսկայական ազդեցություն ունեն ամբողջ աշխարհի ֆինանսական և ներդրումային դաշտի վրա, մասնավորապես՝ արտաթոփային փոխարժեքների տատանումները և ստեղծված անորոշությունը կարող է ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով նշված հանգամանքների և նրանց ազդեցության անկանխատեսելիությունը՝ Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

Պատերազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության սահմանին

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը սկսեց լայնածավալ մարտական գործողություններ Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի ուղղությամբ: 2022թ. սեպտեմբերի 16-ին ժամանակավոր հրադադար հայտարարելուց հետո պարբերաբար տեղի են ունենում հարձակումներ: Բանակցային գործընթացներն ընթացքի մեջ են, և Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

23. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հասույթի ճանաչում

Ընկերությունը ճանաչում է եկամուտը հետևյալ հիմնական աղբյուրներից՝

- հյուրանոցային ծառայություններ,
- հյուրանոցային համալիրի կառուցում:

Հյուրանոցային ծառայություններից հասույթ

Ընկերությանը պատկանող և վարձակալված հյուրանոցներում Ընկերությունն ունի պարտավորություններ հյուրանոցային և այլ օժանդակ ծառայություններ տրամադրելու համար: Հյուրանոցային ծառայությունից Ընկերության հասույթը ստացվում է սովորաբար հաստատված գիշերային վճարից, ինչպես նաև լրացուցիչ հաստատագրված վճարներից՝ գնված ցանկացած օժանդակ ծառայությունների համար: Սովորաբար պարտավորությունների կատարումը առաջանում են հյուրի դուրս գրվելու պահին: Մատուցված ծառայությունների դիմաց վճարները հիմնականում կատարվում են այն ժամանակ, երբ հյուրը դուրս է գրվում հյուրանոցից: Ընկերությունն ընդհանուր առմամբ սենյակների վաճառքից և այլ օժանդակ ծառայություններից ստացված եկամուտը ճանաչում է օրվա կտրվածքով՝ ելնելով գիշերակացից և այլ մատուցված ծառայություններից: Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը հյուրանոցային ծառայություններից հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում:

Հյուրանոցային համալիրի շինարարություն

Ընկերությունը՝ հաճախորդների հետ երկարաժամկետ պայմանագրերի հիման վրա, կառուցում և վաճառում է հյուրանոցներ: Նման պայմանագրերը կնքվում են նախքան հյուրանոցային օբյեկտների շինարարությունը սկսելը: Ընկերությունը պայմանագրորեն սահմանափակված է կառուցվող գույքը այլ հաճախորդին հանձնելու, ինչպես նաև իրավունք է ձեռքբերում կատարված աշխատանքի դիմաց վճարման ենթակա գումարի նկատմամբ: Ուստի հյուրանոցային համալիրի շինարարությունից ստացված եկամուտը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ըստ ավարտվածության աստիճանի, ելնելով կատարված աշխատանքների համար կրած ծախսերի համամասնությունից:

Ընկերությունը հաշվեգրում է հասույթը հյուրանոցային համալիրների կառուցման համար՝ հիմնվելով կատարողական ակտերի վրա: Որոշակի փուլ հասնելուն պես հաճախորդին ուղարկվում են համապատասխան կատարողական ակտեր, ստորագրված երրորդ կողմ հաղիսացող գնահատողի կողմից և համապատասխան փուլի վճարման հաշիվ ապրանքագիր: Եթե փուլային վճարումը ավելի մեծ է, քան ճանաչված եկամուտը՝ ավարտվածության չափի մեթոդով հաշվարկված, տարբերության մասով Ընկերությունը ճանաչում է պայմանագրային պարտավորություն: Հաճախորդների հետ շինարարական պայմանագրերը չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ, քանի որ եկամտի ճանաչման և փուլային վճարման ժամկետների միջև ընկած ժամանակահատվածը միշտ մեկ տարուց պակաս է:

Էլեկտրաէներգիայի արտադրություն

Էլեկտրաէներգիայի վաճառքից հասույթը ճանաչվում է շահույթի (վնասի) և այլ համապարփակ եկամտի հաշվետվությունում ամսական ակտի հիման վրա, որը պարունակում է փաստացի հաղորդված էլեկտրաէներգիայի քանակները համաձայն առկա պայմանագրային դրույթների:

Ամսական ակտը պատրաստվում է էլեկտրաէներգիայի սպառման ամսական ամփոփ հաշվետվության հիման վրա (ներառում է ծավալներ):

Էլեկտրաէներգիայի հաղորդման և շուկայում վաճառքի սակագները կարգավորվում են պետական իրավասու մարմինների կողմից:

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ներքո ներկայացված կատեգորիաներից մեկով՝ կախված այն նպատակից, որի համար ակտիվը ձեռք է բերվել:

Ամորտիզացված արժեքով չափվող

Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների և ծառայությունների մատուցումից (օրինակ՝ առևտրային դեբիտորական պարտքեր), ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, և հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեքը կանխորոշելով:

Ընթացիկ և ոչ ընթացիկ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առևտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետև, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առևտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեքը կման պահուստները ճանաչվում են վճարունակության կորուստների ակնկալվող մոդելի հիման վրա: Պահուստի գումարի որոշման մեթոդաբանությունը հիմնված է այն հանգամանքի վրա, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահից հետո արդյոք եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ: Այն ակտիվների համար, որոնց սկզբնական ճանաչման պահից հետո չի եղել վճարունակության ռիսկի զգալի աճ, ճանաչվում է վճարունակության ռիսկի տասներկու ամսվա ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ակտիվների համար, որոնց վճարունակության ռիսկը զգալիորեն աճել է, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները: Բանկային օվերդրաֆտները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են ընթացիկ պարտավորություններում վարկերի և փոխառությունների ներքո:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է երկու կատեգորիայի՝ պարտավորության ձեռքբերման նպատակին համապատասխան:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պայմանը բավարարող ֆինանսական պարտավորությունների:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

- Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած դրանց ստացմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Ժամանակաշրջանի տոկոսային ծախսերը հաստատուն դրույքով ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության պարտավորություններ հոդվածում: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության նպատակներից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են սկզբնական գործարքային ծախսերը, ետգնման վճարները, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները կամ արժեկտրոնները:
- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը, եթե վերջինս էականորեն տարբերվում է սկզբնական արժեքից:

Արտարժույթով գործարքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով: Որոշակի ամսաթվի դրությամբ գերիշխող փոխարժեքների սահմանման դեպքում հղում է արվում ՀՀ կենտրոնական բանկի կայքում www.cba.am, հրապարակված փոխարժեքներին: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ

Ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Վաճառքի համար մատչելի դրամային ակտիվների վերափոխարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

Տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմում էին 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 413.89 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 3.71 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 447.90 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 4.50 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ):

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափվում են կիրառելով հարկային դրույքաչափեր, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ և ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հողամասերն ու շենքերը հետագայում չափվում են իրական արժեքով՝ որակավորված մասնագետի կողմից կատարված պարբերական գնահատումների հիման վրա: Այդ վերագնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքն էապես չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ իրական արժեքից: Հողամասերի ու շենքերի վերագնահատումից առաջացած իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում և կուտակվում են վերագնահատման պահուստում, բացառությամբ այն դեպքի, երբ արժեքի նվազումը գերազանցում է վերագնահատման պահուստի կրեդիտային մնացորդը (կամ նման գործարքի հակառակ տարբերակը): այս դեպքում գերազանցող մասը ճանաչվում է շահույթում կամ վնասում (փոփոխությունը կատարվել է 2016թ.):

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:

Հիմնական միջոցների այլ միավորների գծով մաշվածությունը հաշվարկվում է օգտակար ծառայության ընթացքում դրանց հաշվեկշռային արժեքի դուրս գրման համար՝ օգտագործելով հետևյալ տոկոսադրույքները:

Հիմնական միջոցներ	Տարեկան տոկոսադրույք	Հաշվարկման մեթոդ
Շենքեր և շինությունների գծով կապիտալ ներդրումներ	2 %	Գծային
Մեքենաներ և սարքավորում	20 %	Գծային
Հարմարանքներ և սարքեր	20 %	Գծային
Համակարգչային տեխնիկա	20 %	Գծային
Տրանսպորտային միջոցներ	20 %	Գծային

Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի միջին կշռված արժեքի բանաձևը:

Պահուստներ

Ընկերությունը ճանաչել է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Ձեռչման դրույքը պետք է լինի այն դրույքն՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Հարկեր

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է, որը հաշվարկվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքի նախատեսված առանձնահատկությունները:

Շահութահարկի հաշվարկման իմաստով հարկատուի շահույթը համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Վարձակալություն

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ՝

- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած է փոքրարժեք ակտիվ, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված վարձակալությամբ ենթադրվող դրույքով, եթե այդ դրույքը հնարավոր է հեշտությամբ որոշել: Եթե ոչ (սովորաբար պատահող դեպքեր), հաշվարկը կատարվում է կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով: Վարձակալության փոփոխուն վճարումները ներառվում են վարձակալական պարտավորության հաշվարկում, միայն եթե նրանք կախված են ինդեքսից կամ դրույքից: Այս դեպքում վարձակալական պարտավորության սկզբնական չափումը ենթադրում է այն, որ փոփոխուն մասը մնալու է կայուն վարձակալական ժամկետի ընթացքում: Այլ վարձակալական փոփոխուն վճարումները համարվում են ժամանակաշրջանի ծախսեր:

Որոշելիս, արդյոք Շնկերությունն ունի ակտիվի ուղղակի օգտագործման իրավունք, Շնկերությունը հաշվի է առնում, թե արդյոք նա որոշում է, թե ինչպես և ինչ նպատակով է օգտագործվում ակտիվը օգտագործման ժամանակահատվածում: Եթե պայմանագիրը կամ պայմանագրի մի մասը չի համապատասխանում այդ չափանիշներին, Շնկերությունը կիրառում է այլ կիրառելի ՖՀՄՍ-ներ, քան ՖՀՄՍ 16-ը:

Հավելված 1 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում:

Հոդված	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	57,476	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	164,509	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	3,041,191	<u>Ընթացիկ</u> Կապակցված կողմերից չապահովված փոխառությունների գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Բանկային վարկեր	922,804	Բանկային վարկերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 2	8% զեղչի դրույք ԱՄՆ դոլարով մնացորդների համար